

<https://doi.org/10.59546/18290744-2023.10-12-69>

ՄԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ,
դասախոս*

MERI KHACHATRYAN
*PhD student,
Lecturer at the Chair of Civil Procedure at YSU Faculty of Law*

МЕРИ ХАЧАТРЯН
*Аспирант, лектор кафедры гражданского процессуального
права юридического факультета ЕГУ*

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

PECULIARITIES OF DISTRIBUTION OF THE BURDEN OF PROOF IN CASES OF CONFISCATION OF PROPERTY OF ILLEGAL ORIGIN

ОСОБЕННОСТИ РАСПРЕДЕЛЕНИЯ БРЕМЕНИ ДОКАЗЫВАНИЯ ПО ДЕЛАМ О КОНФИСКАЦИИ СОБСТВЕННОСТИ НЕЗАКОННОГО ПРОИСХОЖДЕНИЯ

Ներածություն

Հանցավոր գործունեությունից ստացված ակտիվների բռնագանձման ավանդական կառուցակարգերի կողքին հայտնված առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի նորարարությունը և հիմնական առանձնահատկությունը դրսևորվում է ապացուցման տարբերակված կանոններում: Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթներում կիրառելի չէ քրեական դատավարությունում գործող հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշը: Ապացուցման առավել մեղմ չափանիշների սահմանումը հնարավորություն է տալիս ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձել քաղաքացիական դատավարության կարգով, այդուհանդերձ ՀՀ քաղաքացիական դատավարությունում գործող ապացուցման կանոնները ամբողջ ծավալով կիրառելի չեն քննարկվող վարույթում: Ինստիտուտի առանձնահատկություններով պայմանավորված՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներին վերագրվում են ապացուցման բեռի բաշխման տարբերակված կանոններ և ապացուցողական կանխավարկածներ, որոնք հնարավոր են դարձնում գույքի ապօրինի ծագման ողջամիտ ենթադրությունների հիման վրա գույքը բռնագանձել:

հոգուտ պետության:

Քննարկվող վարույթում կիրառելի ապացուցողական չափանիշ սահմանելու հիմնախնդիրը բազմիցս քննարկվել է ոլորտը կարգավորող միջազգային փաստաթղթերում, ինչպես նաև ազգային և միջազգային դատարաններում:

Այսպես, *Թմրամիջոցների և հոգեմետր նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին 1988 թ. ՄԱԿ-ի կոնվենցիայի*¹ 5-րդ հոդվածի 7-րդ մասը նախատեսում է ենթադրյալ եկամուտների կամ բռնագանձման ենթակա այլ գույքի օրինական ծագումն ապացուցելու բեռի տեղափոխումն ապահովելու հնարավորությունը այն պայմանով, որ այդպիսի միջոցը համապատասխանի ազգային օրենսդրության սկզբունքներին, դատական և այլ քննության բնույթին:

Եվրոպական Միության կողմից 2014 թվականին ընդունված հանցավոր գործունեության արդյունքում ստացված ակտիվների ստեղծման և բռնագանձման վերաբերյալ թիվ 2014/42/EU դիրեկտիվի² 21-րդ կետը սահմանում է, որ գույքի բռնագանձումը կարող է հնարավոր լինել, եթե դատարանը հանգում է այն եզրակացության, որ վիճելի գույքը ձեռք է բերվել հանցավոր գործունեության արդյունքում: Նշվածը չի նշանակում, որ պետք է հաստատվի հանցավոր գործունեությունից ձեռք բերված լինելու հանգամանքը, սակայն անդամ պետությունները կարող են բավարար համարել, որ դատարանը հավանականությունների հավասարակշռման կամ այլ ողջամիտ ենթադրությունների հիման վրա ավելի հավանական համարի գույքի՝ հանցավոր գործունեությունից ստացված լինելը, քան այլ գործունեությունից ստացված լինելը:

Ինչպես տեսնում ենք, միանշանակ է այն մոտեցումը, որ հնարավոր է համարվում գույքի ապօրինի ծագման ողջամիտ հավանականության հիման վրա ապացուցման բեռի փոխանցումը պատասխանողին, որը որոշ պայմանների առկայության դեպքում պետք է ապացուցի իր կողմից ձեռք բերված գույքի օրինական ծագումը: Այնուամենայնիվ, ոլորտը կարգավորող միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում է, որ առաջադրված չեն գույքն ապօրինի ծագում ունեցող որակելու չափանիշները կամ գույքի և հանցավոր գործունեության միջև կապը հաստատելու հիմքերը: Սույն հետազոտության շրջանակում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած դատական պրակտիկայի, եվրոպական առաջադեմ երկրներում ինստիտուտի հաջող կիրառելիության փորձի ուսումնասիրության հիման վրա քննարկվել են վարույթում կիրառելի ապացուցողական չափանիշները, որի հիման վրա առաջարկվել են ապացուցման բեռը բաշխելու տարբերակված կանոններ, ինչպես նաև գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործարկման և դրա հաղթահարման պայմանները:

Հիմնական հետազոտություն

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով քննարկվող վարույթներում ապացուցման բեռի բաշխման առանձնահատկություններին, արտահայտել է այն դիրքորոշումը, որ որոշ նախապայմանների առկայության դեպքում ապացուցման բեռի փոխանցումը պատասխանող կողմին անհամատեղելի չէ անձի արդար դատաքննության իրա-

¹ Հայերեն տեքստի համար տե՛ս ՀՀԱԳՆՊՏ 2012.12.28/14(22):

² Մանրամասն տե՛ս Directive 2014/42/EU of The European Parliament and of The Council of 3 April 2014 on the freezing and confiscation of instrumentalities and proceeds of crime in the European Union, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32014L0042&from=EN>:

վունքի հետ³: Որպես օրինակ, Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով⁴ Եվրոպական դատարանը նախադեպային դիրքորոշում է հայտնել այն մասին, որ ապացուցման բեռի շրջադարձը պատասխանողի նկատմամբ չի խախտել Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի⁵ 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձի արդար դատաքննության իրավունքը, քանի որ պատասխանողը ապահովված է եղել բավարար երաշխիքներով, ինչպիսին է գործի հրապարակային քննությունը, որի ընթացքում վերջինս հնարավորություն է ունեցել ներկայացնել ապացույցներ և հաղթահարել գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը:

Հարկ ենք համարում ընդգծել, որ քննարկվող գործով արտահայտած դիրքորոշումը վերաբերելի է Միացյալ Թագավորությունում ներդրված և լայն կիրառելիություն ունեցող չբացատրվող հարստացման (unexplained wealth) ինստիտուտի իրավական կարգավորումներին⁶: Հետևաբար՝ կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում ապացուցման բեռի շրջադարձելիության իրավաչափությունը գնահատելու հարցում առանցքային նշանակություն ունի տվյալ երկրի օրենսդրությամբ գույքի ապօրինի ծագման կանխավարկածը հաղթահարելու դատավարական երաշխիքների ամրագրումը և ապահովումը:

Նախքան ապացուցման բեռի փոխանցման հատուկ կանոններին անդրադառնալը՝ հարկ ենք համարում քննարկել առանց հանցավոր գործունեության կատարման փաստը սահմանված կարգով հաստատելու գույքի ձեռք բերման և հանցավոր գործունեության միջև անուղղակի կապը գնահատելու չափանիշները:

Բռնագանձման վարույթներում հանցավոր գործունեության և գույքի ձեռք բերման միջև պատճառական կապի հիմնախնդիրը բազմիցս քննարկվում է ազգային և միջազգային դատարանների կողմից, իսկ երբեմն անգամ բարձրացվում է այդ կարգավորումների սահմանադրականության հարցը: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Տոդորովն ընդդեմ Բուլղարիայի գործով, անդրադառնալով անձի՝ սեփականության իրավունքի միջամտության համաչափությանը, նշել է, որ հանցավոր գործունեության և գույքի ձեռք բերման միջև ուղղակի կամ անուղղակի պատճառական կապը պետք է հաստատվի կամ առնվազն ենթադրելի լինի: Վերահաստատելով տվյալ գործով Բուլղարիայի բարձրագույն դատարանի դիրքորոշումը՝ դատարանը գտել է, որ ազգային մարմինները յուրաքանչյուր գործով դատարանին պետք է տրամադրեն որոշ ապացույցներ, որոնք կարող են հիմնավորել գույքի՝ հանցավոր գործունեությունից ստացված լինելը, հակառակ պարագայում պատասխանողի սեփականության իրավունքի միջամտությունը անհամաչափ կլինի⁷:

Հարկ ենք համարում, սակայն, ընդգծել, որ նշված որոշումը կայացվել է՝ հաշվի առնելով Բուլղարիայի նախկին օրենքի՝ 2005 թվականին ուժի մեջ մտած «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման մասին» օրենքի կարգավորումները, իսկ օրենքը ուժը կորցրած է ճանաչվել 2012 թվականին: Նշված օրենքի կարգավորումների համաձայն՝ բռնագանձ-

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը Կոնդրոնն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, 2 մայիս 2000 թ., թիվ 35718/97, կետ 56:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, 5 հուլիս 2001, թիվ 41087/98:

⁵ Տե՛ս Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիա, ընդունվել է 04.11.1950 թվականին Եվրոպայի Խորհուրդի կողմից, ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ.367:

⁶ Մանրամասն տե՛ս «Հանցավոր գործունեության արդյունքում ստացված եկամուտների մասին» Միացյալ Թագավորության օրենք, 2002, բաժին 362A-362-IA:

⁷ Տե՛ս Տոդորովը և ուրիշները ընդդեմ Բուլղարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը, 13 հուլիս 2021, Կետ 212:

ման ենթակա է այն գույքը, որը ձեռք բերողը մեղադրվել է տվյալ օրենքով սահմանված հանցագործությունների կատարման համար, և գույքի օրինական ծագումը հաստատված չլինելու պարագայում ողջամտորեն ենթադրվում է, որ գույքը հանցավոր գործունեության արդյունք է⁸: Այսինքն՝ չենք կարող հաստատապես պնդել, որ սույն որոշումն ամբողջ ծավալով վերագրելի է նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված չբացատրվող հարստացման ինստիտուտին, այդուհանդերձ դատարանը կարևորել է անձի՝ կոնվենցիայով երաշխավորված սեփականության իրավունքի միջամտության համաչափությունը, որի ուղենիշ է ոչ միայն գույքի և անձի օրինական եկամուտների էական անհամապատասխանությունը, այլ նաև հանցավոր գործունեության հետ այդ գույքի անուղղակի առնչությունը:

Զարմանալի չէ, որ չնայած ներկայումս Բուլղարիայում գործող «Կոռուպցիայի կանխարգելման և ապօրինաբար ստացված գույքի բռնագանձման մասին» օրենքով ներդրվել է չբացատրվող հարստացման մոդելը, այնուամենայնիվ հաշվի առնելով պետության դեմ կայացված վերոնշյալ որոշումը՝ գույքի բռնագանձման հիմքում կրկին դրվում են գույքի հետ հանցավոր գործունեության առնչությունը առավել հավանական դարձնող որոշ հանգամանքներ:

Այսպես, վկայակոչված օրենքով լայնացվել է ուսումնասիրություն սկսելու հիմքերի շրջանակը, սակայն համեմատելով ՀՀ օրենսդրության համապատասխան կարգավորումների հետ՝ տեսնում ենք, որ ուսումնասիրություն սկսելու բոլոր հիմքերը կապվում են հարուցված քրեական գործի, քրեական հետապնդման, վարչական իրավախախտման կամ պաշտոնատար անձի կողմից հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու հետ⁹, այսինքն՝ հիմքերը բավական հստակ են և ի տարբերություն ներպետական կարգավորումների, տարընկալումների տեղիք չեն տալիս: Բացի դրանից՝ ըստ Բուլղարիայի օրենսդրության՝ հայցվորի վրա դրված է ոչ միայն ուսումնասիրության ժամանակահատվածում ձեռք բերված գույքի արժեքի և անձի եկամուտների էական անհամապատասխանությունը ապացուցելու պարտականությունը, այլ նաև ուսումնասիրության համար հիմք հանդիսացած փաստերի առկայությունն ապացուցելու և գույքի ձեռք բերման աղբյուրները և եղանակները վեր հանելու պարտականությունը:

Նշված կարգավորումներն ամփոփելու արդյունքում կարող ենք եզրակացնել, որ չնայած Բուլղարիայում գործող ներկայիս օրենքով ներդրվել է չբացատրվող հարստացման մոդելը, այնուամենայնիվ ձեռք բերված գույքի և հանցավոր գործունեության միջև անուղղակի կապի ապացուցումը իսպառ չի խզվում՝ նկատի ունենալով օրենքով ուսումնասիրություն նախաձեռնելու հստակ հիմքերը և այդ հիմքերի առկայությունը ապացուցելու՝ պետության պարտականությունը:

Անդրադառնալով ներպետական կարգավորումներին՝ գտնում ենք, որ ձեռք բերված գույքի և հանցավոր գործունեության միջև անուղղակի կապը առաջին հերթին դրսևորվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու հիմքերի հետ, որոնք մեծամասամբ առնչվում են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով¹⁰ (այսուհետ նաև՝ Օրենք) սահմանված հանցագործությունների կատարման բավարար հիմքերի հիման վրա նախաձեռնված քրեական վարույթների հետ: *Այսինքն՝ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործարկելու համար իրավասու մարմինը պետք է ներկայացնի*

⁸ Տե՛ս «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման մասին» Բուլղարիայի օրենք, բաժին 4(1):

⁹ Տե՛ս «Կոռուպցիայի կանխարգելման և ապօրինաբար ստացված գույքի բռնագանձման մասին» Բուլղարիայի օրենքի 107 և 108 հոդվածներ:

¹⁰ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության օրենքը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ընդունվել է 16 ապրիլի 2020թ., ՀՀՊՏ 2020.05.13/50(1605):

նաև ուսումնասիրություն սկսելու հիմք հանդիսացող հանգամանքի և ենթադրվող հանցավոր գործունեության հետ գույքի ձեռքբերման անուղղակի կապը հավաստող ապացույցներ: Սակայն ի տարբերություն գույքի ձեռքբերումը օրինական եկամուտներով չհիմնավորվելու փաստի, որը, ըստ Օրենքի կարգավորումների, պետք է հաստատվի ապացուցման ընդհանուր կանոնով (ապացույցների գերակշռմամբ), գտնում ենք, որ ուսումնասիրություն սկսելու հիմք հանդիսացող հանգամանքի և գույքի ձեռքբերման անուղղակի կապը հավաստող փաստերը դատարանի կողմից պետք է գնահատվեն և կանխավարկածի գործադրման հիմքում դրվեն ոչ թե քաղաքացիական դատավարության ապացուցման ընդհանուր կանոններով, այլ ապացուցվի այնքանով, որքանով այդ փաստերի գոյությունը առավել հավանական կդարձնի գույքի ապօրինի ծագումը:

Հարկ ենք համարում ընդգծել, որ ապացուցման բեռի ճիշտ որոշման և գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործադրման չափանիշի մշակման դեպքում միայն կարող է ապահովվել անձի արդար դատաքննության իրավունքի լիարժեք իրացումը: *Անկերլ ընդդեմ Շվեյցարիայի գործով*¹¹ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում: *Սփանկինիչն ընդդեմ Լեհաստանի գործով* Դատարանը հայտնել է այն դիրքորոշումը, որ այն գործերով, որոնցով հակառակորդներ են դատախազության մարմինները և մասնավոր անձինք, դատախազության մարմինները կարող են ունենալ ավելի արտոնյալ դիրք, որն արդարացված է իրավակարգի պաշտպանությամբ: Այնուամենայնիվ, դա չպետք է հանգեցնի նրան, որ քաղաքացիական գործով կողմի համար ստեղծվեն անհիմն անբարենպաստ պայմաններ դատախազության մարմինների համեմատությամբ¹²:

Նշվածը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ քննարկվող վարույթներում կողմերի իրավահավասարությունը կարող է ապահովված համարվել, եթե առաջին, գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործադրումը հիմնված չլինի անուղղակի ենթադրությունների վրա, ինչի արդյունքում պատասխանողի վրա չդրվի հակառակը ապացուցելու անհամաչափ բեռ, և երկրորդ, պատասխանողին ընձեռվի գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը հաղթահարելու ողջամիտ հնարավորություն:

Իրավիճակը փոխվում է այն դեպքում, երբ չբացատրվող հարստացման ինստիտուտի շրջանակում պաշտոնատար անձանց նկատմամբ ուսումնասիրություն սկսելու և նրանցից ապօրինի ծագում ունեցող գույք բռնագանձելու համար գույքի ձեռք բերման և հանցավոր գործունեության միջև անուղղակի կապի ապացուցում ամենևին չի պահանջվում: Ստացվում է, որ դատախազության ապացուցման պարտականությունն էլ ավելի դյուրին է դառնում՝ սահմանափակվելով միայն գույքի ձեռքբերումը օրինական եկամուտներով չհիմնավորելը ապացուցելու պարտականությամբ:

Համանման կարգավորումներ նախատեսված են նաև Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի

¹¹ Տե՛ս Անկերլ ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը:

¹² Տե՛ս Սփանկինիչն ընդդեմ Լեհաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը, 6 հուլիս 2006, թիվ 46917/99, 68-69 կետեր:

5-րդ և 6-րդ կետերով, ըստ որոնց՝ պաշտոնատար անձանց նկատմամբ ուսումնասիրություն սկսելու հիմքերը չեն առնչվում քրեական մեղադրանքի կամ հարուցված քրեական գործի առկայության հետ: Ստացվում է, որ նման դեպքերում պաշտոնատար անձի ձեռք բերած գույքի և օրինական եկամուտների անհամապատասխանությունը ինքնին դիտվում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործողության պայման: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ գույքի ձեռքբերումը օրինական եկամուտներով չհիմնավորելը դեռևս չի ենթադրում այդ գույքի ապօրինի ծագումը, մյուս տեսանկյունից, եթե պաշտոնատար անձի կարգավիճակով պայմանավորված գույքի ձեռքբերումը օրինական եկամուտներով չհիմնավորվելու դեպքում առավել հավանական է դիտվում դրա անօրինական ծագումը, ապա խնդրահարույց է նույն չափանիշի կիրառումը նաև պաշտոնը ստանձնելուն նախորդող ժամանակահատվածում անձի ձեռք բերած գույքի ծագման վերաբերյալ, երբ լիովին կապը խզվում է հանցավոր գործունեության արդյունքում գույքի ձեռք բերման հավանականության հետ:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցված վարույթներում անձի ձեռք բերած գույքը վերջինիս օրինական եկամուտներով չհիմնավորելը ապացուցելուց զատ իրավասու մարմինը պետք է դատարանին ներկայացնի այն հիմքերը, որոնք բավարար են դիտարկվել կասկածելու, որ առկա է եղել ապօրինի ծագում ունեցող գույք՝ միաժամանակ ներկայացնելով ապացույցներ ուսումնասիրության ընթացքում այդ հիմքերը բավարար չափով հիմնավորվելու վերաբերյալ: Ավելին, համապատասխան պաշտոնը ստանձնելուն նախորդող ժամանակահատվածում գույքի ձեռքբերման և օրինական եկամուտների էական անհամապատասխանության հայտնաբերումը հիմք կարող է լինել գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործարկման համար պայմանով, որ իրավասու մարմինը գույքի ձեռքբերման և հանցավոր գործունեության միջև անուղղակի կապի վերաբերյալ բավարար հիմքեր ներկայացնի դատարանին:

Նշվածի համատեքստում հարկ ենք համարում նաև նշել, որ չնայած Օրենքով նախատեսվել են գույքի ապօրինի ծագումը ապացուցելու տարբերակված կանոններ, սակայն գույքի ապօրինի ծագում ունենալու հավանականությունը գնահատելու չափորոշիչները Օրենքով վեր հանված չեն, իսկ կանխավարկածի գործարկումը կախվածության մեջ է դրվել բացառապես գույքի ձեռքբերումն օրինական եկամուտներով չհիմնավորելու փաստն ապացուցելու հետ: Այդուհանդերձ, հանրային շահն անձի մասնավոր շահերից գերադասելն Օրենքի նպատակին համահունչ կարող է դիտարկվել այն դեպքում, երբ **ներկայացված ապացույցների հիման վրա գույքի ոչ օրինական ծագումը առավել հավանական դիտարկվի, քան այդ գույքի օրինական ծագումը:**

Ընդ որում, ապօրինի ծագում ունենալու մասին հավանականությանը և կատարված ենթադրություններին գնահատական տալը խնդրահարույց է որոշակիության տեսանկյունից, քանի որ միջազգային դատական պրակտիկան կամ ներպետական օրենսդրությունը չի հստակեցնում կամ սահմանում ապացուցման այն միասնականացված չափանիշները, որոնք ուղենիշ են ծառայում գույքի ապօրինի ծագման փաստը գնահատելու համար: Թե՛ անձի հիմնարար իրավունքների պաշտպանության տեսանկյունից և թե՛ ինստիտուտի գործարկման իրավաչափության տեսանկյունից խնդրահարույց է մնում այն հարցը, **թե ինչ ծավալով իրավասու մարմինը պետք է ապացուցի գույքի ապօրինի ծագումը, այսինքն՝ որ պայմանների դեպքում կարող է գործել գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, իսկ ապացուցման բեռը՝ փոխանցվել պատասխանողին:**

Որոշ դատարաններ գտնում են, որ պետք է ապացույցները բավարար լինեն առավել հավանական համարելու անձի կողմից տվյալ արարքի կատարումը, նշվածը հիմնավորելով

նրանով, որ նման գործիքակազմի հիմքում ընկած է մեղադրական դատավճռի բացակայության գաղափարը¹³, և օրենքը հնարավորություն է տալիս բռնազանձելու այն գույքը, որն անձի օրինական եկամուտներին ակնհայտ չի համապատասխանում¹⁴: Ավելին, դատական գործերի գերակշիռ մասով գույքի ապօրինի ծագման որակումը կախվածության մեջ չի դրվել հանցագործությունից հետո ձեռք բերված լինելու հանգամանքից¹⁵, սակայն որոշ դատարաններ գտել են, որ բռնազանձման ենթակա է այն գույքը, որը ժամանակագրորեն վերագրվում է համապատասխան հանցագործության կատարմանը¹⁶ և նախկինում ձեռք բերված գույքը չի կարող բռնազանձվել: Այդուհանդերձ գտնում ենք, որ գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված ապացույցներին դատավարական գնահատական տալու չափանիշների սահմանումը առանցքային է մարդու իրավունքների սահմանափակումներ ենթադրող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման վարույթում, այլապես անձի իրավունքների միջամտությունը կունենա կամայական բնույթ և համաչափ չի լինի Օրենքով հետապնդած նպատակին:

Հատկանշական է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Իտալիայի դեմ քննվող գործերից մեկով անդրադարձել է գույքի բռնազանձման հիմքում դրվող փաստերի ապացուցման չափանիշներին և դրանք սահմանելու անհրաժեշտությանը: Մասնավորապես, դատարանը կոնվենցիայի խախտում է արձանագրել՝ նշելով, որ Իտալիայի օրենսդրությամբ սահմանված չեն այն չափանիշները և փաստակազմը, որոնք հիմք կտան դատարանների գնահատելու անձի «վտանգավորությունը»՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Իտալիայի օրենսդրության համաձայն գույքի՝ ապօրինի ծագումը կարող է հաստատվել անձի վտանգավորությունը և մաֆիայի հետ կապը հաստատելու դեպքում¹⁷: Չնայած նշված գործով քննարկման առարկա էր հանդիսանում վարույթում կիրառված կանխարգելիչ միջոցները, այլ ոչ թե բռնազանձման հիմքերը, սակայն չի բացառվում նման դիրքորոշման զարգացումը առանց մեղադրական դատավճռի գույքի բռնազանձման այլ գործերով:

Նախկինում հիշատակված դիրեկտիվը մասամբ որոշակիացնում էր ապացուցման հիմքում դրված **հավանականությունների հավասարակշռման սկզբունքը**, որը կարող է օգնել դատարանին հանցավոր գործունեությունից գույքի ստացումը առավել կամ քիչ հավանական դիտարկելու հարցում: Հավանական կապի կամ բավարար հիմքերի առկայությունը ավելին է, քան պարզապես ենթադրությունը: Նշված չափանիշը ընկած է հավանականությունների հավասարակշռման սկզբունքի հիմքում, որը գործում է գույքի դեմ (in rem) բռնազանձման ինստիտուտը լայնորեն կիրառող երկրներում, ինչպիսիք են Իտալիան, Միացյալ Թագավորությունը, Իռլանդիայի Հանրապետությունը, Կանադան և ԱՄՆ-ն: Չափանիշի հիմքում դրված է այն մոտեցումը, որ փաստը առավել հավանական է, որ ճիշտ է կամ 50 տոկոսից ավել հավանականություն կա, որ ճիշտ է:

¹³ Տե՛ս Իտալիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատի 1992 թվականի փետրվարի 20-ի որոշումը Բարբարոյի գործով (189334):

¹⁴ Տե՛ս օրինակ, Իտալիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատի 1999 թվականի մարտի 22-ի որոշումը Ռիելան և ուրիշները գործով (214507): Այս որոշմամբ դատարանը հայտնել է այն դիրքորոշումը, որ եթե ակնհայտ է, որ գույքը ստացվել է անձի ծավալած հանցավոր գործունեությունից, ապա գույքի ձեռք բերման և մաֆիայի հետ առնչության միջև կապի հաստատումը անհրաժեշտ չէ:

¹⁵ Տե՛ս օրինակ, Իտալիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2010 թվականի հունվարի 15-ի որոշումը, Քվարտարարոն և ուրիշները գործով (246084); Իտալիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը Ստագոն և ուրիշները գործով (249012):

¹⁶ Տե՛ս օրինակ, Իտալիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2014 թվականի փետրվարի 14-ի որոշումը Մոնդինիի գործով (260104):

¹⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը Դե Թոմասսոն ընդդեմ Իտալիայի գործով, 23 փետրվար 2017, թիվ 43395/09:

Հարկ ենք համարում նկատել, որ Օրենքի նախագծով ամրագրված է եղել հավանականությունների հավասարակշռման չափանիշը¹⁸, իսկ ըստ Օրենքի ընդունման հիմնավորումների՝ նշված չափանիշի ներդրումը բխել է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի էությունից և թույլ է տվել, ինչպես պետությանը, այնպես էլ գործին մասնակցող այլ անձանց, ավելի ցածր ապացուցողական չափանիշը հաղթահարելով, ապացուցել այն փաստերը, որոնց մասով վերջիններս կրում են ապացուցման պարտականություն¹⁹, այնուամենայնիվ նշված չափանիշը Օրենքով ամրագրում չի ստացել:

Չնայած օրենսդրական մակարդակով ամրագրված չլինելուն, Վենետիկի հանձնաժողովն Օրենքի հետ կապված որոշ հարցերի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանին տրամադրած կարծիքում առաջարկել է Օրենքով ամրագրել հավանականությունների հավասարակշռման չափանիշը²⁰: Համանման ինստիտուտ Բուլղարիայում ներդնելու համար Վենետիկի հանձնաժողովի տրամադրած կարծիքում ևս ընդգծվել է, որ հավանականությունների հավասարակշռման չափանիշի կիրառումը հնարավորություն է տալիս համոզվելու գույքի ապօրինի ծագման մեջ առանց քրեաիրավական արարքին որակում տալու²¹:

Իսկապես, հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված գույքի բռնագանձման քաղաքացիադատավարական կառուցակարգն ինքնին ենթադրում է գույքի ապօրինի ծագման վերաբերյալ բավարար հիմքերի գնահատումը ենթադրությունների և հավանականությունների հիման վրա: Կարծում ենք, որ քննարկվող վարույթում հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշի կիրառումը պետք չէ բացառել այն հիմնավորմամբ, որ Օրենքով ներդրված գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը անխզելիորեն կապված է ապացուցման բեռի բաշխման և ապացուցողական չափանիշի ընտրության հետ:

Այսպես, Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը: Փաստորեն, գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը ենթադրում է, որ վարույթում գույքի ապօրինի ծագման փաստը չի հաստատվում քաղաքացիական դատավարությանը բնորոշ ապացույցների գերակշռման սկզբունքով, ինչը նախատեսում է ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից որոշելու սկզբունքը: Այսինքն՝ իրավասու մարմնի վրա դրված չէ գույքի ձեռքբերման և հանցավոր գործունեության միջև ուղղակի կապի հաստատման փաստը ապացուցելու պարտականությունը և չապացուցելու դեպքում դրա բացասական հետևանքները: Սակայն նշված կանխավարկածը չի գործում Օրենքի ուժով, այլ իրավասու մարմինը պետք է հասնի կանխավարկածի գործարկմանը: Կանխավարկածը գործարկվելու դեպքում պատասխանողը պետք է հերքի կանխավարկածը կիրառելի ապացուցողական չափանիշի հիման վրա, հակառակ պարագայում այն վերածվում է հաստատված փաստի:

Հանրահայտ է, որ քաղաքացիադատավարական ընթացակարգերում հաճախ են կիրառ-

¹⁸ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/1931/about>, 3-րդ հոդված, 5-րդ կետ:

¹⁹ Տե՛ս «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ընդունման մասին հիմնավորումներ, կետ 92, մանրամասն տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://www.parliament.am/draft_docs7/K-438-438-14_Himnavorum.pdf

²⁰ Տե՛ս [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2022\)048-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2022)048-e), 35 կետ:

²¹ Տե՛ս Վենետիկի հանձնաժողով, CDL-AD(2011)023, կարծիք Բուլղարիայի հանցավոր գործունեության կամ վարչական իրավախախտումների արդյունքում ձեռք բերված ակտիվների բռնագրավման մասին վեցերորդ վերանայված օրենքի նախագծի վերաբերյալ, 20 հունիս 2011, կետ 50:

վում հերքվող կանխավարկածները, որոնք հեշտացնում են որոշ փաստերի ապացուցումը: Ապացուցողական կանխավարկածներն ապացուցման այնպիսի հատուկ կանոններ են, որոնք ոչ թե կոնկրետացնում են ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը, այլ նախատեսում են այդ կանոնից որոշակի բացառություններ, որոնց ուժով պահանջի կամ առարկության հիմքում ընկած փաստի գոյությունն օրենքի ուժով ենթադրվում է, քանի դեռ վարույթի մյուս կողմը հակառակը չի ապացուցել²²:

Գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի ներդրման նպատակն է հեշտացնել հայցվորի կողմից գույքի ապօրինի ծագում ունենալու փաստերի ապացուցումը, քանի որ հանցագործության կատարման փաստի, հանցակազմի բոլոր տարրերի և հանցագործության արդյունքում գույքի ձեռքբերման փաստի ապացուցման պարտականությունը հայցվորի վրա դնելու դեպքում վարույթը կվերածվի քրեական դատավարության կարգով գույքի բռնագրավման առանց համապատասխան դատավարական երաշխիքների ապահովման: Մյուս կողմից անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի հաղթահարումը հայցվորի կողմից չի կարող այնքան հեշտացվել, որ պատասխանողի վրա դրվի գույքի օրինական ծագումը ապացուցելու անհամեմատ ավելի ծանր բեռ:

Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան չի բացառում կանխավարկածների կիրառումը²³, այնուամենայնիվ արդար դատաքննության մասին խոսք կարող է լինել այն դեպքում, երբ դատախազությունը հնարավորություն ունի հիմնվել փաստի կամ իրավունքի այն կանխավարկածների վրա, որոնք գործարկվում են ողջամտության սահմաններում՝ հաշվի առնելով գույքի բռնագանձման համաչափությունը և անձի պաշտպանության իրավունքի ապահովումը²⁴:

Ինչպես նշեցինք, ներպետական օրենսդրությունում ներդրված գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը չի գործում Օրենքի ուժով և չի տարածվում դատարանի կողմից գնահատման ենթակա բոլոր փաստերի վրա: Չնայած Օրենքում նշվում է, որ քննարկվող կանխավարկածը գործում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում, այնուամենայնիվ մասնավորեցվում է կանխավարկածի գործարկման հնարավորությունը:

Մասնավորապես, Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույքը, մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով:

Նշված կարգավորումից, նախևառաջ, պետք է եզրակացնել, որ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործում է գույքի՝ ապօրինի ծագման փաստը հաստատելու հարցում, և նշված *կանխավարկածի կիրառմանը չի վերագրվում վիճելի գույքը անձին պատկանելու, այն է՝ գույքի իրական շահառու հանդիսանալու, այլ անձանց հետ փոխկապակցված լինելու փաստերի հաստատումը, որոնք ընդհանուր կարգով ապացույցների գերակշռման հիման վրա ենթակա են ապացուցման դատախազության կողմից*:

²² Տե՛ս Մեդրյան Ս., Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Արդարադատության ակադեմիա, Երևան, 2020 թ., էջ 111

²³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը Արկուրին ընդդեմ Իտալիայի գործով, 5 հուլիս 2001:

²⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը Բաթլերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, 27 հունիս 2002, կետ 8:

Անձին գույքի իրական շահառու համարելու դատախազության փաստարկները պետք է լինեն հիմնավորված, իրական շահառու հանդիսանալու հանգամանքը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, իր հերթին դատարանը այդ հանգամանքը չի կարող գնահատել հավանականությունների հավասարակշռմամբ: Այսինքն՝ այն պարագայում, երբ ըստ դատախազության ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքը պատկանում է այլ անձի, սակայն բավարար հիմքեր կան ենթադրելու, որ այդ գույքի իրական շահառուն հանդիսանում է պատասխանողը, ապա այդ գույքի նկատմամբ գույքի ապօրինի ծագման կանխավարկածը գործադրելուց առաջ դատախազությունը պետք է ապացույցների բավարար համակցությամբ հիմնավորի անձի՝ վիճելի գույքի իրական շահառու հանդիսանալու հանգամանքը: Ինչը նշանակում է, որ պետք է ապացուցվի այդ անձի անունից, օգտին կամ նրա հաշվին տվյալ գույքի ձեռքբերման գործարք իրականացվելու կամ այդպիսի գործարք վերահսկելու կամ անձի անունից կամ օգտին գործարք իրականացվելու փաստը:

Հակառակ պարագայում անձին չպատկանող գույքի և միաժամանակ անձի օրինական եկամուտների անհամապատասխանության ապացուցումը էլ ավելի դյուրին կլինի, իսկ իրական շահառու լինելու ենթադրությունները պարզապես հավանականություն առաջացնելու և այդ հավանականությունը դատարանի կողմից հիմք ընդունվելու դեպքում կխախտվի ոչ միայն իրական շահառու դիտվող անձի, այլ նաև գույքի սեփականատիրոջ սեփականության իրավունքը: *Գտնում ենք, որ այդպիսի գույքի նկատմամբ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը կարող է գործել միայն այն դեպքում, երբ միաժամանակ ապացույցների գերակշռմամբ ապացուցվի նաև այդ գույքի իրական շահառու հանդիսանալու հանգամանքը:*

Ինչպես նախկինում նշեցինք, քննարկվող վարույթներին բնորոշ է կանխավարկածի և ապացուցման բեռի շրջադարձի կանոնների կիրառումը, որը ընդունելի է համարվել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից, սակայն Օրենքի կարգավորումներից **միանշանակ չէ պատասխանողի վրա ապացուցման պարտականություն դնելու հարցը:** Ինչպես քննարկեցինք, ապացուցման բեռի փոխարկումը նշանակում է, որ դատախազության կողմից գույքի ապօրինի ծագումը ապացուցելու դեպքում հակառակն ապացուցելու պարտականությունը փոխանցվում է պատասխանողին: Այսինքն՝ պատասխանողի վրա սկզբնապես չի դրվում գույքի օրինական ծագումը ապացուցելու պարտականությունը, այլ այն առաջանում է միայն այն դեպքում, երբ դատախազությունն ապացուցում է անձի օրինական եկամուտների հետ գույքի ձեռքբերման էական անհամապատասխանությունը և գույքի անօրինական ծագման հավանականությունը: Նշվածից ակնհայտ է, որ գույքի՝ ապօրինի ծագումը ապացուցելու պարտականությունը կրում է դատախազությունը, և այդ պարտականությունը կատարելուց հետո միայն պատասխանողը պետք է ապացուցի հակառակը:

Վերոնշյալ դիրքորոշումը բխում է նաև Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասից, որը սահմանում է, որ պատասխանողը կարող է հերքել գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ ներկայացնելով օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ:

Սույն կարգավորումից հետևում է, որ պատասխանողի վրա ոչ թե դրվում է ապացուցման պարտականություն, այլ պարզապես վերջինիս հնարավորություն է տրվում հերքել կանխավարկածը՝ գույքի օրինական ծագումը հիմնավորող ապացույցներ ներկայացնելով: Ստացվում է, որ առանց պատասխանողի վրա ապացուցման պարտականություն դնելու վերջինիս կողմից իրեն ընձեռնված իրավունքից չօգտվելու հետևանքները հավասարեցվում են ապացուցման պարտականությունը չկատարելու արդյունքում առաջացող անբարենպաստ հետևանքներին, ինչը հանդիսանում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթին բնո-

րոշ առանձնահատկություն:

Այնինչ գործնականում դատարաններն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ հայցվորի վրա դնում են գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործարկման համար անհրաժեշտ փաստերի ապացուցման պարտականությունը և միաժամանակ պատասխանողի վրա՝ գույքի օրինական ծագումը հաստատող փաստերն ապացուցելու պարտականությունը²⁵, ինչը համահունչ է Օրենքին և ապացուցման բեռը բաշխելու տրամաբանությանը:

Կողմերի միջև ապացուցման բեռը բաշխելու հիմնական նպատակն է որոշակիացնել, թե որ փաստը չապացուցվելու դեպքում որ կողմն է կրում այդ փաստը չապացուցված մնալու բացասական հետևանքները: Քննարկվող վարույթում հայցվորի կողմից իր ապացուցման պարտականությունը կատարելն է հանգեցնում գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործադրման, որից հետո միայն խոսք կարող է լինել ապացուցման բեռը պատասխանողին փոխանցվելու մասին: Այնինչ ապացուցման բեռը ի սկզբանե կողմերի միջև բաշխելու դեպքում ստացվում է, որ պատասխանողն ամեն դեպքում պետք է ապացուցի օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը, ինչը, սակայն, իրավական հետևանք չի առաջացնում այն դեպքում, երբ իրավասու մարմինն չի հաջողվում կատարել իր ապացուցման պարտականությունը:

Հետևաբար, գտնում ենք, որ դատարանը պետք է ապացուցման պարտականությունը բաշխելու որոշմամբ միայն հայցվորի վրա դնի գույքի ապօրինի ծագման կանխավարկածը հաղթահարելու համար անհրաժեշտ փաստերը ապացուցելու պարտականությունը, քանի որ գույքը բռնագանձելու վճիռը կայացնելու համար բավարար է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործադրումը: Այնուհետև դատարանը պետք է որոշի, թե արդյոք կիրառելի է տվյալ դեպքում գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը և դրական եզրահանգման գալու դեպքում ժամկետ սահմանի հակառակը ապացուցող փաստեր պատասխանողի կողմից ներկայացնելու համար:

Նշված մոտեցումը արդարացված ենք համարում Օրենքի հիմքում դրված տրամաբանության և պատասխանողի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ Օրենքը չի սահմանում պատասխանողի կողմից ապացույցներ ներկայացնելու պարտականություն, իսկ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը դեռևս գործարկված չլինելու պարագայում պատասխանողի վրա այն հերքելու պարտականություն դնելը իրավաչափ չի կարող համարվել: Բացի դրանից՝ պատասխանողի համար գույքի օրինական ծագումը հավաստող ապացույցներ ձեռք բերելը որոշ դեպքերում կարող է անհամաչափ ջանքեր և ռեսուրսներ պահանջել, իսկ քանի դեռ կանխավարկածը չի գործել չկա համապատասխան ապացույցներ դատարան ներկայացնելու անհրաժեշտությունը:

Գործի դատական քննության փուլում գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործարկվելու դեպքում անհրաժեշտ է քննարկել նաև պատասխանողի կողմից **կանխավարկածը հերքելու (հակականխավարկածի) ապացուցողական չափանիշի ընտրությունը:**

Օրենքի կարգավորումներից հետևում է, որ ենթադրությունների հիման վրա ձևավորված կանխավարկածը պատասխանողը կարող է հերքել հակականխավարկածի՝ գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ օրինական եկամուտների առկայությունը հիմնավորելու դեպքում:

²⁵ Տե՛ս օրինակ թիվ ՀԿԴ/0005/02/22 քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 17 հուլիսի 2023 թվականի որոշումը ապացուցման պարտականությունը բաշխելու մասին, թիվ ՀԿԴ/0025/02/22 քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 17 ապրիլի 2023 թվականի որոշումը ապացուցման պարտականությունը բաշխելու մասին:

Օրենքը, սակայն, կրկին լուծում է այդպիսի հիմնավորումներին դատավարական գնահատական տալու չափանիշների մասին:

Հատուկ կարգավորումների բացակայության պարագայում ստացվում է, որ պատասխանողը պետք է ապացույցների գերակշռմամբ հիմնավորի իր մոտ համապատասխան օրինական եկամուտների առկայությունը: Այնուամենայնիվ, օրենսդիրը, հաշվի առնելով անձի եկամուտների ուսումնասիրվող ժամանակահատվածի տևողությունը (մինչև 30 տարի ժամանակահատվածը) և համապատասխան ապացույցները ներկայացնելու օբյեկտիվ հնարավորությունը, Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանել է, որ այն դեպքերում, երբ փաստերը, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, անձը չի կրում իր կողմից ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները, եթե ապացուցում է, որ տվյալ ապացույցը ոչնչացվել է կամ կորել է ոչ իր մեղքով: Փաստորեն, որոշակի հանգամանքների առկայության դեպքում պատասխանողը կարող է հաղթահարել գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ ոչ թե ուղղակիորեն ապացուցելով գույքի օրինական ծագումը, այլ տվյալ գույքի ծագումը կամ օրինական եկամուտների առկայությունը փաստող ապացույցները ոչ իր մեղքով ոչնչացված լինելու փաստը:

Օրենքի որոշ հարցերի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված կարծիքում վերջինս ևս մտահոգություն է հայտնել ժամանակի մեջ Օրենքի բավական լայն գործողության վերաբերյալ և կարևորել է անձի կողմից ապացույց ներկայացնելու անհնարինության դեպքերի հստակ շրջանակի և վկայակոչված նորմի կիրառելիության դատավարական երաշխիքների սահմանումը²⁶:

Ի դեպ, համանման կարգավորում սահմանված է եղել նաև «Հանցավոր ճանապարհով կամ վարչական իրավախախտման արդյունքում ձեռք բերված ակտիվների բռնագանձման մասին» Բուլղարիայի օրենքի նախագծում, որի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ այդ կանոնը հավասարապես վերաբերելի է այն դեպքերին, երբ փաստաթղթերի պահպանման համար սահմանված ժամկետները անցած են լինում, և նման պարագայում անձը չպետք է ապացուցի, որ փաստաթուղթը կորել է կամ ոչնչացել է: Բացի դրանից՝ հանձնաժողովը ընդգծել է, որ եթե պատասխանողը ողջամիտ հիմնավորումներ է ներկայացնում փաստաթուղթը պահպանված չլինելու վերաբերյալ, ապա վերաբերելի հանգամանքները հաշվի առնելով՝ այն կարող է դիտարկվել, որպես բավարար ապացույց²⁷: Ի դեպ այդ կարգավորումն ամրագրված է նաև Բուլղարիայի ներկայիս գործող օրենքով²⁸:

Մեր կարծիքով՝ **ապացույցները ոչնչացված կամ կորած լինելու մեջ անձի մեղքի բացակայությունը** դատարանը պետք է քննարկի երկու գործոնների համատեքստում:

Առաջինն **արտաքին գործոնն է**, երբ համապատասխան փաստաթղթերը պահպանված չեն լինում պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, արխիվներում կամ ոչ պետական կազմակերպություններում, ինչը կարող է պայմանավորված լինել, թե՛ օրենսդրությամբ այդպիսի փաստաթղթերի պահպանման ժամկետը լրացած լինելով²⁹, թե՛ այլ պատճառներով: Այդ դեպքում համապատասխան մարմնի կողմից տրված տեղե-

²⁶ Տե՛ս [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2022\)048-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2022)048-e), կետ 57, 58:

²⁷ Տե՛ս [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2011\)023-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2011)023-e), կետ 58:

²⁸ Տե՛ս «Կոռուպցիայի կանխարգելման և ապօրինաբար ստացված գույքի բռնագանձման մասին» Բուլղարիայի օրենք 156-րդ հոդված 5-րդ մաս

²⁹ Տե՛ս օրինակ ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 397-Ն որոշումը «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության

կանքը կամ համապատասխան իրավական ակտի վկայակոչումը բավարար է ապացուցված համարելու փաստաթղթի ոչնչացումը կամ կորուստը ոչ անձի մեղքով: Երկրորդը **ներքին գործուն է**, որը կապված է ապացույցը վկայակոչող անձի հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս նախքան Օրենքի ընդունումը պարտականություն չի ունեցել պահպանել իր գույքի ձեռք բերման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը (օրինակ՝ փոխառության, նվիրատվության պայմանագիր, ստացական և այլն): Նմանօրինակ պարագայում գտնում ենք, որ անձը պետք է հիմնավորումներ ներկայացնի համապատասխան ապացույցը պահպանած չլինելու հանգամանքների, ինչպես նաև պետք է ներկայացնի համապատասխան փաստի գոյությունը հիմնավորող օժանդակ ապացույցներ, այդ թվում՝ վկայի ցուցմունքներ, այլ փաստաթղթեր:

Գտնում ենք, որ Օրենքի գործողությունը Օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ ծագած իրավահարաբերությունների վրա տարածելը անձի վրա գույքի օրինական ծագումը ապացուցելու պարտականություն չենելու համատեքստում ևս հանգեցնում է հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշի կիրառելիության, քանի որ համապատասխան ապացույցը պահպանված չլինելու դեպքում դատարանը պետք է պարզի՝ արդյո՞ք պատասխանողի ներկայացրած փաստարկները առավել հավանական են դարձնում գույքի օրինական ծագումը, թե ոչ:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև պատասխանողի կողմից գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը հաղթահարելու և ըստ այդմ, **հայցը մերժվելու դեպքում դատական ծախսերի բաշխման հարցին:**

Ինչպես գիտենք, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը կարող է ավարտվել ուսումնասիրության փուլում, եթե պատասխանողը ներկայացնում է Օրենքով սահմանված հայտարարագիր: Չեն բացառվում այն դեպքերը, երբ ուսումնասիրության փուլում պատասխանողը չներկայացնի գույքի օրինական ծագումը հաստատող ապացույցները, որոնք վերջինիս տիրապետության տակ եղել են, այլ համապատասխան ապացույցները ներկայացնի գործի դատական քննության արդյունքում, որի արդյունքում դատարանը մերժի ներկայացված հայցը: Նման պարագայում ստացվում է, որ ղեկավարվելով դատական ծախսերի բաշխման ընդհանուր կանոնով՝ դատարանը դատական ծախսերը, այդ թվում՝ պատասխանողի (պատասխանողների) փաստաբանի (փաստաբանների) վարձատրության գումարը, պետք է դնի հայցվորի՝ ՀՀ գլխավոր դատախազության վրա:

Կարծում ենք, որ նշվածի համատեքստում դատական ծախսերի բաշխման մասով անհրաժեշտ է Օրենքով սահմանել տարբերակված կանոններ: Մասնավորապես, այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքների մասին պատշաճ ծանուցված պատասխանողը հնարավորություն է ունեցել ուսումնասիրության փուլում հիմնավորել ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող դիտարկվող գույքի օրինական ծագումը, սակայն դա չանելու արդյունքում իրավասու մարմինը իրեն վերապահված լիազորությունների շրջանակում իրացրել է հայց ներկայացնելու իրավունքը, ստացվում է, որ պատասխանողի ցուցաբերած անգործության արդյունքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը տեղափոխվել է դատական փուլ:

Չնայած ուսումնասիրության փուլում Օրենքով սահմանված հայտարարագրի և օրինական եկամուտները հիմնավորող ապացույցների ներկայացումը շահագրգիռ անձի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, սակայն այդ իրավունքը չիրացնելու արդյունքում ուսումնա-

կառավարության 2006 թվականի մարտի 9-ի n 351-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», որով սահմանված են արխիվային փաստաթղթերի պահպանության ժամկետները

սիրությունը չդադարեցնելու և հայց ներկայացնելու արդյունքում ՀՀ գլխավոր դատախազությունը, այնուհետև դատարանը ծախսում են հավելյալ ռեսուրսներ գործի քննություն իրականացնելու համար, որի անհրաժեշտությունը, ստացվում է, որ վերացած է եղել: Հետևաբար՝ արդարացված չի կարող համարվել պետությանը գործի դատական քննության ծախսերը վճարելու պարտականություն առաջադրելը այն դեպքում, երբ պատասխանողի տիրապետության ներքո գտնվող ապացույցները վերջինիս կողմից չներկայացնելու դեպքում վարույթը չի ավարտվել ուսումնասիրության փուլում:

Համանման կարգավորում սահմանված է նաև «Կոռուպցիայի կանխարգելման և ապօրինաբար ստացված գույքի բռնագանձման մասին» Բուլղարիայի Հանրապետության օրենքի 156-րդ հոդվածի 6-րդ մասով, ըստ որի՝ եթե պատասխանողը դատարանին ներկայացնում է այն ապացույցները, որոնք վերջինս կարող էր ներկայացնել ուսումնասիրություն իրականացնող հանձնաժողովին, սակայն չի տրամադրել հանձնաժողովից անկախ հանգամանքներում, ապա դատարանը անկախ գործի ելքից դատական ծախսերը կարող է դնել պատասխանողի վրա:

Հետևաբար գտնում ենք, որ նման պարագայում անկախ գործի ելքից դատական ծախսերը պատասխանողի վրա դնելու հնարավորության նախատեսումը կխթանի ուսումնասիրության փուլում վարույթը ավարտելուն՝ հաշվի առնելով գործի քննության ժամանակ անկախ գործի ելքից դատական ծախսերը կրելու հնարավորությունը:

Ի հարկե նշվածը չի կարող նաև նշանակել, որ պատասխանողի համար անբարենպաստ հետևանք կարող է առաջանալ այն դեպքում, երբ անձը ուսումնասիրության փուլում հնարավորություն չի ունեցել ներկայացնել այդ ապացույցները և գործի դատական քննության ընթացքում է կարողացել ներկայացնել այդ ապացույցները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Օրենքով ամրագրել հետևյալ կարգավորումը. եթե պատասխանողը գործի դատական քննության փուլում ներկայացնում է վիճելի գույքի ձեռք բերումը հավաստող ապացույցներ կամ Օրենքով սահմանված հայտարարագիր, և չի հիմնավորում ուսումնասիրության փուլում իր կամքից անկախ հանգամանքներում դրանց չներկայացումը, ապա դատարանը կարող է դատական ծախսերը անկախ գործի ելքից ամբողջությամբ կամ մասամբ դնել պատասխանողի վրա:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Վարույթում գույքի ապօրինի ծագումն ապացուցված է համարվում գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի հիման վրա, սակայն կանխավարկածի գործարկման հիմքում միայն գույքի ձեռքբերումն օրինական եկամուտներով չհիմնավորելու՝ իրավասու մարմնի պարտականության սահմանումը խախտում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռումը և անձի սեփականության իրավունքի միջամտության համաչափությունը, ուստի գտնում ենք, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի նաև այն հիմքերը, որոնք բավարար են դիտարկվել ուսումնասիրությունը սկսելու համար՝ միաժամանակ ներկայացնելով ապացույցներ ուսումնասիրության ընթացքում այդ հիմքերը բավարար չափով հիմնավորվելու վերաբերյալ:

2. Պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցված վարույթներում անձի կողմից՝ համապատասխան պաշտոնը ստանձնելուն նախորդող ժամանակահատվածում ձեռք բերված գույքի և օրինական եկամուտների էական անհամապատասխանության հայտնաբերումը հիմք կարող է լինել գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործարկման համար

պայմանով, որ իրավասու մարմինը գույքի ձեռքբերման և հանցավոր գործունեության միջև անուղղակի կապի վերաբերյալ բավարար հիմքեր ներկայացնի դատարան:

3. Չնայած Օրենքով ամրագրված չէ հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշը, սակայն գտնում ենք, որ այն պետք է կիրառելի լինի տվյալ վարույթում այն հիմնավորմամբ, որ հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված գույքի բռնագանձման քաղաքացիադատավարական կառուցակարգը ինքնին ենթադրում է գույքի ապօրինի ծագման հիմքերի գնահատումը ողջամիտ ենթադրությունների հիման վրա, իսկ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի կիրառումը և դրա հերքման հնարավորությունը խոսում է այն մասին, որ դատարանը պետք է որոշի, թե գույքի ձեռք բերման որ վարկածն է առավել հավանական:

4. Հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշը վարույթում պետք է կիրառելի լինի նաև պատասխանողի մեղքի բացակայությամբ համապատասխան ապացույցը պահպանված չլինելու դեպքում՝ այդ ապացույցով հիմնավորվող փաստի առկայությունը գնահատելու հարցում, որի արդյունքում դատարանը պետք է պարզի՝ արդյոք պատասխանողի ներկայացրած փաստարկները և այդ ապացույցներով հաստատման ենթակա փաստերը առավել հավանական են դարձնում գույքի օրինական ծագումը, թե ոչ:

5. Գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործում է գույքի՝ ապօրինի ծագման փաստը հաստատելու հարցում, և նշված կանխավարկածի կիրառմանը չի վերագրվում վիճելի գույքը անձին պատկանելու, այն է՝ գույքի իրական շահառու հանդիսանալու, այլ անձանց հետ փոխկապակցված լինելու փաստերի հաստատումը, որոնք ընդհանուր կարգով ապացույցների գերակշռման հիման վրա ենթակա են ապացուցման հայցվորի կողմից:

6. Քննարկվող վարույթում գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործարկման համար անհրաժեշտ փաստերը ապացուցելու պարտականությունը կրում է հայցվորը, իսկ պատասխանողի ապացուցման պարտականությունը գործում է պայմանական կարգով, հետևաբար նախքան գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործարկվելը դատարանը չի կարող միաժամանակ պատասխանողի վրա դնել գույքի օրինական ծագումը ապացուցելու պարտականությունը, իսկ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործարկվելու դեպքում դատարանը պետք է պատասխանողին տրամադրի կանխավարկածը հերքող ապացույցներ ներկայացնելու համար ժամկետ:

7. Հաշվի առնելով հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության փուլում շահագրգիռ անձի կողմից ներկայացված հիմնավորումների հիման վրա վարույթը ավարտելու հնարավորությունը՝ առաջարկում ենք, որ այն դեպքում, երբ պատասխանողը գործի դատական քննության փուլում ներայացնում է վիճելի գույքի ձեռք բերումը հավաստող ապացույցներ կամ Օրենքով սահմանված հայտարարագիր, որի հիման վրա հերքվում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, իսկ պատասխանողը չի հիմնավորում ուսումնասիրության փուլում իր կամքից անկախ հանգամանքներում դրանց չներկայացումը, ապա դատարանը իրավասու լինի դատական ծախսերը անկախ գործի ելքից ամբողջությամբ կամ մասամբ դնել պատասխանողի վրա:

Ամփոփագիր: Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգերը ներդնելու անհրաժեշտությունը պայմանավորված է եղել հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված ակտիվները օրինական շրջանառություն բերելու ավանդական միջոցների ոչ արդյունավետ լինելով: Այդ իսկ պատճառով ՀՀ իրավական համակարգում ներդրված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի հիմքում

դրված է փաստական բնույթի կանխավարկածների օգտագործմամբ ակտիվների հանցավոր ծագումը հաստատելու համար ապացուցման մեղմ չափանիշների կիրառման հայեցակարգը: Հոդվածում քննարկվել է վարույթներին հատուկ հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշը, որը հայտնի չի եղել հայրենական օրենսդրությանը, սակայն որի կիրառելիությունը լայնորեն տարածում է գտել այդ ինստիտուտի հաջող կիրառելիություն ունեցող երկրներում: Դատավարության կողմերի շահերի հավասարակշռման տեսանկյունից հոդվածում վեր են հանվել ապացուցման պարտականություն սահմանելու սկզբունքները և առանձնացվել ապացուցման հիմնական և պայմանական պարտականություն ունեցող դատավարության մասնակիցներին:

Օրենքի վերլուծության արդյունքում հետևություն է կատարվել, որ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործարկման համար ապացուցման ենթակա փաստերի շրջանակը հստակեցված չէ, ինչը կարող է հանգեցնել ոչ միասնական պրակտիկայի ձևավորմանը: Հոդվածում առաջարկվել են այդ փաստերի շրջանակի որոշման չափանիշները:

Հոդվածում անդրադարձ է կատարվել նաև դատական ծախսերի բաշխման կանոններին և առաջարկվել է օրինական եկամուտներով գույքի ձեռք բերումը հավաստող ապացույցները գործի դատական քննության փուլում ընդունվելու դեպքում դատական ծախսերը անկախ գործի ելքից ամբողջությամբ կամ մասնակիորեն դնել պատասխանողի վրա այն դեպքում, երբ վերջինս չի կարողանում ապացուցել ուսումնասիրության փուլում այդ ապացույցների ներկայացման անհնարինությունը:

Annotation. The introduction of mechanisms for non-conviction-based asset confiscation stemmed from the perceived inefficiency of traditional approaches in integrating assets acquired through criminal activities into legal circulation. The institution of confiscation of property of illegal origin in the legal system of the Republic of Armenia relies on the application of soft standards of proof to establish the criminal origin of assets, employing factual presumptions. This article discusses the unique evidentiary standard of balance of probabilities specific to these proceedings, a concept not previously known in domestic legislation but widely adopted in countries where this institution has proven successful.

From the perspective of balancing the interests of litigating parties, the article highlights the principles governing the allocation of the burden of proof, distinguishing the trial participants with the main and conditional burden of proof.

Upon analyzing the law, it was deduced that the scope of facts required to execute the presumption of illegal origin of property is not explicitly defined, potentially leading to the emergence of inconsistent practices. The article proposes criteria for determining the scope of these facts.

Additionally, the article addresses the rules for distributing court costs, suggesting that if evidence substantiating the lawful acquisition of property is accepted during the judicial investigation stage, the court costs should be borne by the defendant, either in full or in part, irrespective of the case outcome, unless the defendant can prove the impossibility of presenting such evidence during the investigation stage.

Аннотация. Введение механизмов конфискации активов без вынесения обвинительного приговора было вызвано осознанием неэффективности традиционных подходов к интеграции полученных преступным путем активов в легальный оборот. Институт конфискации имущества незаконного происхождения в правовой системе Республики Армения опирается на применение мягких стандартов доказывания для установления преступного происхождения активов с использованием фактических презумпций. В статье обсуждается характерный для этих разбирательств уникальный доказательный стандарт баланса вероятностей, ранее не известная в отечественном законодательстве, но широко принятая в странах, где этот институт доказал свою эффективность, концепция.

С точки зрения баланса интересов сторон процесса в статье выделены регулирующие распределение бремени доказывания принципы, разграничение участников судебного разбирательства с основным и условным бременем доказывания.

По результату анализа закона сделан вывод, что круг фактов, необходимых для реализации презумпции незаконного происхождения имущества, прямо не определен, что потенциально может привести к возникновению противоречивых практик. В статье предлагаются критерии определения объема этих фактов.

Кроме того, в статье рассмотрены правила распределения судебных издержек, предполагающие, что в случае

признания на стадии судебного следствия обосновывающих законное приобретение имущества доказательств, судебные издержки должен нести ответчик, полностью или частично, независимо от исхода дела, если только ответчик не докажет невозможность представления таких доказательств на стадии расследования.

Բանալի բառեր - գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկած, իրավասու մարմին, ապացուցման բեռ, հակականխավարկած, ապացույցների գերակշռում, հանցավոր գործունեություն, հավանականությունների հավասարակշռման սկզբունք, հայտարարագիր, իրական շահառու, սեփականության իրավունք, արդարացի հավասարակշռություն:

Keywords: *presumption of illegal origin of property, authorized body, burden of proof, counter-presumption, preponderance of evidence, criminal activity, principle of balance of probabilities, declaration, beneficial owner, right of ownership, fair balance.*

Ключевые слова: *презумпция незаконного происхождения имущества, уполномоченный орган, бремя доказывания, контрпрезумпция, перевес доказательств, преступная деятельность, принцип баланса вероятностей, декларация, бенефициарный собственник, право собственности, справедливый баланс.*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Իրավական ակտեր

1. Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիա,
2. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք,
3. Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին 1988թ. ՄԱԿ-ի կոնվենցիա,
4. «Կոռուպցիայի կանխարգելման և ապօրինաբար ստացված գույքի բռնագանձման մասին» Բուլղարիայի օրենք,
5. «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման մասին» Բուլղարիայի օրենք,
6. «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի n 351-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 397-Ն որոշում,
7. Եվրոպական Միության կողմից 2014 թվականին ընդունված հանցավոր գործունեության արդյունքում ստացված ակտիվների սառեցման և բռնագանձման վերաբերյալ թիվ 2014/42/EU դիրեկտիվ,
8. «Հանցավոր գործունեության արդյունքում ստացված եկամուտների մասին» Միացյալ Թագավորության օրենք,
9. Շվեյցարիայի քրեական օրենսգիրք:

Տեսական աղբյուրներ

10. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի ընդունման հիմնավորումը,
11. **Մեղրյան Ս.**, Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020թ, 341 էջ,
12. **Վենետիկի հանձնաժողով**, CDL-AD(2022)048, AMICUS CURIAE կարծիք «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի որոշ հարցերի վերաբերյալ, 19 դեկտեմբեր 2022, 13 էջ,
13. **Վենետիկի հանձնաժողով**, CDL-AD(2011)023, կարծիք Բուլղարիայի հանցավոր գործունեության կամ վարչական իրավախախտումների արդյունքում ձեռք բերված ակտիվների բռնագրավման մասին վեցերորդ վերանայված օրենքի նախագծի վերաբերյալ, 20 հունիս 2011, 11 էջ:

Դատական պրակտիկա

14. թիվ **ՀԿԴ/0005/02/22** քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 17 հուլիսի 2023 թվականի որոշումը ապացուցման պարտականությունը բաշխելու մասին,
15. թիվ **ՀԿԴ/0025/02/22** քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 17 ապրիլի 2023 թվականի որոշումը ապացուցման պարտականությունը բաշխելու մասին,
16. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը Կոնդրոն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, 2 մայիս 2000թ, թիվ 35718/97,
17. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, 5 հուլիս 2001, թիվ 41087/98,
18. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը Տոդորովը և ուրիշները ընդդեմ Բուլղարիայի գործով, 13 հուլիս 2021,
19. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը Արկուրին ընդդեմ Իտալիայի գործով, 5 հուլիս 2001,
20. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը Բաթլերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, 27 հունիս 2002,
21. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը Ստանկիևիչն ընդդեմ Լեհաստանի գործով, 6 հուլիս 2006, թիվ 46917/99,
22. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը Դե Թոմասսոն ընդդեմ Իտալիայի գործով, 23 փետրվար 2017, թիվ 43395/09,
23. Իտալիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատի 1992 թվականի փետրվարի 20-ի որոշումը Բարբաբոյի գործով (189334),
24. Իտալիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատի 1999 թվականի մարտի 22-ի որոշումը Ռիելան և ուրիշները գործով (214507),
25. Իտալիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2010 թվականի հունվարի 15-ի որոշումը, Քվարտարոն և ուրիշները գործով (246084),
26. Իտալիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը Ստագնոն և ուրիշները գործով (249012),
27. Իտալիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2014 թվականի փետրվարի 14-ի որոշումը Մոնդինիի գործով (260104):

Խաչատրյան Մ. - ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, դասախոս, էլ. հասցե՝ merriekhachatryan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 14.12.2023 թ., տրվել է գրախոսության 14.12.2023 թ., երաշխավորվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Ս. Մեղրյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2024 թ.: